

Աղբիւրի յատկացած

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 28 կիրակի 27 յուլիսի | ութերորդ տարի 1897

ԹԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրէմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր ֆոտօ-գրաւիւր պատկերը, 2) *Մայրիկի անկողնում*, մի շքեղ խրոմօ (սպառուած), 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարիւրմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդաներ, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կ. Աղբիւրը—25 կ. պրեմիաները ստանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.



Գինու ազդեցութեան տակ, բարեկամները միմեանց հետ խօսում էին։

ԹԷՈԴՈՐԱ

Պատմական վէպ Ի. Ֆիօրենտինիի

(Շարունակութիւն *)

XLIII

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Իպպոդրոմի թաղերից մէկում, ուր գտնւում էին ծառաների բնակարանները, պանդոկում հաւաքւել էին կրկէսի ծառայողները, կառապաններ, մշակներ, դիակներ տանող և զանազան դասակարգի մարդիկ։ Գինու ազդեցութեան տակ նրանք խօսում էին առօրեայ անցքերի մասին։ Նրանցից մէկը ի միջի այլոց նկատեց.

—Սակայն դուք շատ բարձր ձայնով մի խօսէք այստեղ, ընդհանուր դահլիճում. աւելի լաւ է մտնենք մի առանձին սենեակ։

—Լաւ,—պատասխանեցին մլուսները և թողին դահլիճը։ Առանձին սենեակ մտնելով, նրանք սկսեցին սրտաբաց խօսակցել։

—Ի՞նչպէս կարողացար տեսնել այդ, Մարկո,—հարցրին երկու թէ երեք հոգի։

—Այո, տեսայ իմ սեփական աչքերով,—պա-

*) Տես Տարազ № 27.

տասխանեց Մարկոն։—Դրանք սարսափելի բաներ են, մութ, առանց լոյսի և օդի, աւելի դերեզմանների նման, քան թէ կենդանի մարդկանց բնակարանի։

—Ի՞նչպէս կարողացար մտնել այնտեղ։

—Ես Հարուստ Իւդիէմիոյի մօտ ծառայում էի։ Նրան մեղադրում էին այնպիսի սարսափելի յանցանքի համար, որ նա բոլորովին մեղաւոր չէր։ Բայց Թէոդորան և նրա ամուսինը ցանկացան ձեռք ձգել նրա հարստութիւնները։

—Դա ամենալաւ միջոցն է օրինական ճանապարհով թալանելու, նկատեց խօսակիցներից մէկը։

—Լաւ էր, մի խանդարի Մարկոյին։

—Ինձ նոյնպէս տանջեցին,—շարունակեց դժբաղդ Իւդիէմիոյի ծառան, ցանկացան, որ ես իմ տիրոջ հակառակ ցոյց տամ։ Խոստովանւում եմ, բարեկամներ, որ այդ տանջանքները մինչև հիմայ էլ որ մտաբերում եմ, քրտինքս վրայ է տալիս, չարչարանքը արիւնհոսութեան էր հասնում, քորոցներ էին ցցում ոտերիս տակ, սովատանջ էին անում. միով բանիւ տանջում էին, մինչև որ ես չըցոյց տւի այն, ինչ որ ինձանից ուզում էին իմանալ, այսինքն ոտեր։

—Ցետոյ։

—Ասացի, ինչ որ ուզում էին։ Իւդիէմիոյին ենթարկեցին պատժի և ըլեցին նրա բոլոր կայքը, իսկ ինձ ազատեցին։ Ահա,—շարունակեց Մարկոն, ցոյց տալով իր մատերը—տանջանքի հետքեր են սրանք։

—Ի՞նչպէս է, որ Թէոդորան ազատում է նրան, որ նրա ճանկն է ընկել հազար անգամ։

—Նրա համար լ հարկէ, որ նա այնքան հզօր է, բացի դրանից, նպատակին հասած է։ Իւդիէմիոն դատապարտւած է, նրա հարստութիւները խլւած, իսկ մնացածի համար նա զրկ չունի։ Եթէ պատրիկներից մէկը նրան անհանգիստ է անում, նրան հրաւիրում են Թէոդորայի առանձնասենեակը, այնտեղից նա ընկնում է բանտ, ուր, լ հարկէ, կամաց-կամաց հանդչում է նրա կեանքը։ Ձեզ յայտնի է Ձէւիչչիոյի կուսակալ Կալինիկոյի հետ պատահած փաստը։

—Ո՛չ։

—Երկու աւազակ, օրը ցերեկով, մորթեցին նրան. էհ, լ հարկէ, մարդասպաններին բռնեցին, դատի ենթարկեցին, սակայն Թէոդորան լմսցաւ և նա ցանկացաւ վրկել նրանց, բայց արդէն ուշ էր, մարդասպաններին կախում էին։ Բայց և այնպէս կայսրուհին հրամայեց զարդարել նրանց շիրիմները խաչերով։

—Այո՛, ով օգտւում է Թէոդորայի սիրուց, նա կարող է անել իր ցանկացածը։

—Միտքդ բեր Անտոնինայի դէպքը Սիլւէրիւս պապի հետ։

—Այո՛, այո՛, Բելիզարիոսի կինը, Թէոդորայի յանձնարարութեամբ, խեղդամահ արաւ սուրբ Հօրը։

—Իսկ Ջիովաննի Կապադոչչիոն, վերջապէս Փացիոյի հալածանքը. էլի շատ օրինակներ, անկարելի է համարել բոլոր զոհերին։

—Ի հարկէ։ Ոչ միայն կայսրուհի Թէոդորան, այլ մինչև անգամ Անտոնինայի միջնորդութիւնն ահագին նշանակութիւն ունի։ Ամենքին յայտնի է, որ Աֆրիկայի նահանգապետ Սերժիոն, դաւաճանաբար մորթեց, իր մօտ խնճոյքի հրաւիրելով 80 զաւառացի դեսպաններ, որ և սարսափելի հետևանքներ ունեցաւ։ Սակայն մեղաւորը չըպատժւեց։ Ի՞նչու։ Որովհետև աւազակ նահանգապետը Անտոնինայի քրոջ աղջկայ փեսացուն էր։

—Ա՜խ, այ թէ չարագործ է եղել այն Թէոդորան։

—Պէտք է ասած, որ նա երբէք ընդունակ չէ եղել բարեգործութիւններ անելու։

—Ի՞նչ բարեգործութիւններ։ Մենք չըգիտենք։

—Այ օրինակ, հէնց Բոսփորի ափին մենաստանի կառուցանելը Կոստանդնուպոլսի տնանկ կանանց համար։

—Է՜հ, սիրելի բարեկամ, եթէ դու այդ բարեգործութիւն ես անւանում,—բարձրաձայն ասաց խօսակիցներից մէկը,—ես քեզ շնորհաւորում եմ, դու անսահման յիմար ես։ Թէոդորան տնանկ կանանց համար ոչ թէ մենաստան էր շինել, այլ բանտ։ Նրանց փակում են այնտեղ, ինչպէս ոճրագործ կանանց, որոնք զրկւած են ոչ միայն ազատութիւնից, այլ մինչև անգամ օրական հացից։ Նրանցից շատերը վայր են ընկնում հինգերորդ յարկից, նախազգալով մահը մշտական տանջանքներից։ Ես ձեզ ասում եմ, որ Թէոդորան կատարեալ չարագործ կին է։

—Լաւ, Յուստինիանն էլ նրանից պակաս չէ,—նկատեց ներկայ եղողներից մէկը՝ Իրկոնէն։

—Դու սխալւում ես, բարեկամ,—ասաց Իւտրոպիոն,—կայսրը բոլորովին էլ վատ չէր լինել, եթէ նա իր կնոջ ազդեցութեան տակ չըլինէր։

—Դու մոլորւում ես,—պատասխանեց Իրկոնէն, այն, ինչ որ դու բարի ես համարում Յուստինիան կայսեր մէջ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամենանտանելի երեսպաշտութիւն։ Գոնէ Թէոդորան իրան ցոյց է տալիս ինչպէս կայ, իսկ նրա ամուսինը բարեպաշտութեան դիմակի տակ զանազան չարագործութիւններ է անում։ Հաւատա՛ ինձ, կայսրը և կայսրուհին միմեանց լաւ են գտել։

—Իրկոնէն շատ ճշմարիտ է ասում,—պատասխանեց Մարկոն։—Յուստինիանը և Թէոդորան կարծես մի ամբողջութիւն են կազմում։ Գիտէք, ես ինչ եմ լսել ամենահաստատ կերպով այն մարդկանցից, որոնք ծառայում են պալատում։

Բոլոր խմբակը շատ հետաքրքրւեց և խնդրում էր պատմել, թէ ինչումն են կայանում այդ տարաձայնները։ (Կըշարունակի)

ԳՀՇԲՐ

Ամրան գիշեր է, խորին լռութիւն
Է տիրապետում, գերթ մեռելութիւն.
Աստղերն երկնիում ororէն ասում,
Քնած ախարհին լուսինը ժպտում...
Լուռ է բնութիւնն, հանգիստ է բոլոր.
Ա՞խ, նա վիշտ չունի, նյ rհում է անդորր։
Սարերի գլխյն, հեռու մարդկանցից,
Մենակ, անբնկեր տանջւում եմ ցորից.
Լուռ է բնութիւնն, հանգիստ է նիրհում,
Իսկ ես մէն մենակ տանջւում եմ, տանջւում...
Ա՞խ, արդեօք սիրտս իւ՞նչու չի նիրհում...

Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ

ՆՎԱՀԱՏ ՄՏԱԾՈՂ *)

ՍՊԻՆՈԶԱ. Նրա կեանքը եւ վարդապետութիւնը։

Սպինոզայի օրինակը կազդուրիչ տպաւորութիւն կ՚անում մարդու հոգու վրայ։ Նա միշտ աշխատում էր իր սեփական աշխատանքով կերակրուել, աշխատում էր ամեն կերպ կրճատել իր պարտաւոր պահանջները, մերժում էր բարեկամների սիրալիր առաջարկութիւնները՝ նրան օգնել փողով, և, միևնոյն ժամանակ՝ միշտ գոհ էր իր վիճակից, միշտ ուրախ և միշտ զբաղած։ Նրա բոլոր գործերի մէջ նկատելի է մի տեսակ հերոսական ամրութիւն և անկախ լինելու մշտական, անվերջանալի ձգտում,—մի յատկութիւն, որին արժանի է որ ամենքը հետևեն։ Նա հրաժարւում է ընդունած և տարածած կարծիքներից, որպէսզի ունենայ իր սեփական կարծիքները. տեսնելով իր շուրջը բնութեան անթիւ երազային դաղտնիքներ, միանգամայն անմատչելի և անհասկանալի իր համար, նա չի ուզում ընդունել ուրիշների տուած, պատրաստի բացատրութիւնները։ Նա թողնում է սինագոգան, հրաժարւում է Դեկարտից և սկսում է մտածել ինքնուրոյնաբար, անկախ որևէ հեղինակութիւնից։ Ոչ միայն բարեկամներից նա խոյս էր տալիս փողի օգնութիւն ստանալ, այլ և իր օրինաւոր հայրական ժառանգութիւնից անգամ նա հրաժարւեց՝ յօգուտ իր քոյրերի։ Երբ բարեկամներից մէկը յայտնեց Սպինոզային թէ մտադիր է ահագին կարողութիւն կտակել նրան —Սպինոզան մերժեց ընդունել այդ նւէրը և համոզեց բարեկամին իր հարստութիւնը կտակել իր եղբօրը։ Սպինոզային առաջարկւեց կենսաթոշակ՝ այն պայմանով միայն, որ նա իր ապագայ շարադրութիւնը նւիրէ Լիւդովիկոս XV-ին, բայց նա մերժեց նոյնպէս կենսաթոշակը, «միտք չունենալով որևիցէ բան նւիրել այդ միապետին»։ Նա ոչ ոքի պարտական չէր կեանքի մէջ, բացի Աստծուց, որ նրան պարգևել էր ընդունակութիւններ և եռանդ-գործ դնելու այդ ընդունակութիւնները։ Մարդու անձնական եռանդի մէջ նա գտնում էր նրա բոլոր արժանիքը և մեծութիւնը։ Այդ պատճառով ստոյիկ սկէպտիկական կերպով էր վերաբերւում դէպի ամեն տեսակ մեկենասութիւն և հովանաւորութիւն, որ երևում է նրա հետևեալ նշանաւոր խօսքերից. «Տէրութիւններն աւելի լաւ է որ չըհիմնէին ճեմարաններ, որովհետև դրանք աւելի ճնշում են, քան թէ խրախուսում հանճարներն»։

Նրա հեղինակած Tractatus zhologico-politicus մի բաւական նշանաւոր դէպք էր թէ փիլիսոփայութեան պատմութեան մէջ և թէ Սպինոզայի կեանքի *)։ Տարատամ ժամանակ էր այն ժամանակը։ Հաշուելով որ Հոլանդիան ազատ երկիր էր, չհաշուելով որ այստեղ ապստամբ էին գտնում բոլոր երկիրներից եկած քաղաքականապէս հալածւածները,—ազատ քաղաքացիական այդ հանրապետութիւնը դառել էր կղերական երկպառակութիւնների մի ազատ ասպարէզ։ Այդ կրօնական վէճերը և մրցումները շատ անգամ կուսակցութիւններին հասցնում էին ծայրայեղ փոխադարձ ատելութեան ու խստասրտութեան։ Աչքի առաջ ունենալով աստւածաբանների մէջ ծագած այդ թշւառ վէճերը և կռիւները՝ Սպինոզան կամեցաւ ապացուցանել, որ անհրաժեշտ է հիմնել մի այնպիսի պետական կրօն, որ չունենալով ստիպողական բնաւորութիւն, առանց բռնանալու մասնաւոր դաւանութեանց վրայ՝ կարողանար միայն կանոնաւորել մարդոց արտաքին յարաբերութիւնները։ Որովհետև տէրութեան դործն է՝ հսկել հասարակաց բարօրութեան վերաբերեալ ամեն բանի վրայ՝ ուստի նա պարտաւոր է հսկել նաև եկեղեցու վրայ և կառավարել նրան ընդհանուր բարեաց համաձայն։ Բայց այստեղ չըպէտք է շփոթել երկու բան. կրօնի արտաքին յարաբերութեանց ազատութիւնը և մտքի ազատութիւնը։ Վերջինը չըպէտք է ենթարկւած լինի պետութեան իրաւասութեանը, իսկ արտաքին յարաբերութիւններն անհրաժեշտ է կառավարել՝ հասարակական անդորրութիւնը պաշտպանելու համար։ Թէև Տուպցատի այս մասը չըգտաւ ընդհանուր հաւանութիւն, բայց այդ գրւածքը հազիւ թէ առաջացներ այնքան աղմուկ և ալեկոծութիւն, եթէ Սպինոզան դրա մէջ սահմանափակւած լինէր միայն վերոյիշեալ խորհրդածութիւններով։ Բայց Սպինոզան աւելի հեռու էր գնում. նա քննադատում էր նաև Կտակարանը և խիստ յարձակումներով հոգևորականութեան վրայ՝ ապացուցանում էր, որ այդ կրօնաւորաց դասը վնասակար մի բան է հասարակութեան համար։ Հետևանքն այն եղաւ, ինչ որ սպասելի էր. գիրքը բանադրանքի ենթարկւեց և նրա մուտքը բոլոր երկրներում արդելւած էր։ Սակայն, ինչպէս միշտ լինում է, այդ հանդամանքն աւելի ևս հետաքրքրութիւն գրգռեց դէպի գիրքը։ Թէ որ աստիճան մեծ տպաւորութիւն էր արել այդ գիրքը,—կարելի է դատել նրանով, որ բազմաթիւ հերքումներ՝ մինը միւսի ետևից՝ շարունակ դուրս էին գալիս նրա դէմ։ Այդ հերքումներից մի քանիսը գրւած էին գրքի միտքն աւելի տարածելու նպատակով։ Բացի դրանից՝ գրքի անունը փոխելով և նրան վերագրելով զանազան աղճատւած անուն-

*) Տես Տարազ № 25.

*) Այս բոլոր տեղեկութիւնները Սպինոզայի մասին մենք քաղել ենք Լիւիսի „Փիլիսոփայութեան պատմութիւնից“։

ներ՝ դարձեալ շատ անգամ թարգմանիչները կարողանում էին հասնել գլխաւոր նպատակին — նրա տարաձեւումն։ Մի կողմից գիտնական զբաղմունքները, միւս կողմից ապրուստի վատ պայմանները քայքայիչ կերպով ազդեցին Սպինոզայի առողջութեան վրայ։ Բայց նա երբէք չէր դանգատւում և լուռ տանում էր իր տանջանքները։ Իր առողջութեան մասին մի անգամ նա գրել է իր բարեկամներից մէկին՝ նամակով։ Իր տաճ խոստումը կատարելու և մի քանի հարցեր պարզելու առթիւ գրելիս, նա մի տեղ աւելացնում է. «եթէ կարողանամ ապրել»։ Ոչ գանգատ, ոչ ափսոսանք, այլ միայն հասարակ պատճառաբանութիւն, տաճ խոստումը կատարելու առթիւ։ Այդ մի հանդարտ, անվեհեր մարդ էր։ Նա ընդունակ էր նոյնպիսի հանգիստ սրտով տանել հիւանդութիւնը և ընդունել մահը, ինչպէս որ տանում էր ամբողջ կեանքում աղքատութիւն և հալածանք։ Ամբողջ իր կեանքում նա հերոսաբար պահեց իրան և հազիւ թէ մահւան առաջ նա պիտ վարանէր։ Իր բնաւորութեան հանդարտ և սառն ստոյիկականութեան հետ՝ նա միացնում էր մանկական ուրախութիւն, որ բղխում էր նրա բարի և սիրող սրտից։ Նա կարողանում էր իր չնչին աշխատանքից բաժին հանել աղքատներին, կարօտեալներին։ Գիտնական աշխարհում նա տարածում էր այնպիսի ուսմունքներ, որոնց վրայ ահագին ջանք էր նա գործ դրել, իսկ մասնաւոր կեանքում՝ նա սովորեցնում էր երեխաներին կանոնաւորապէս յաճախել եկեղեցի։ Նա սովորութիւն ունէր զրոյց անել իր տանտիրոջ և նրա կնոջ հետ, երբ սրանք վերադարձած էին լինում եկեղեցուց՝ և նրանց թէ՝ ինչ քարոզ լսեցին եկեղեցում կամ ինչ օգուտ ստացան լսած քարոզից։ Նա բոլորովին նման չէր այն տեսակ մարդոց, որոնք մի նոր դաղափար, կամ միտք տարածելու ցանկութեամբ՝ աշխատում են ուրիշների ունեցած դաղափարները խորտակել միայն, առանց հարցնելու՝ արդեօք նրանք ընդունա՞կ են նոր դաղափար ըմբռնելու, թէ ոչ։ Մի անգամ Սպինոզայի տանտիրոջ կինը հարցրեց նրան թէ՝ հաւատացա՞ծ է նա, Սպինոզան, որ տիկնոջ դաւանած կրօնը կարող է փրկել նրա հոգին. նա պատասխանեց. «Ձեր կրօնը լաւ է և չարժէ, որ դուք ուրիշ կրօն որոնէք. մի կասկածէք, որ այդ կրօնը կը-փրկէ ձեզ, եթէ դուք ձեր բարեպաշտութեան հետ միացնէք նաև ընտանեկան կեանքի խաղաղ առաքինութիւններ»։ Այս խօսքերը լի են իմաստով և բղխում են սիրող և փորձառու մարդու բերանից։

Այսպէս էր ասրում հրէայ Սպինոզան, — կատարելագործելով ինքը և նպաստելով ուրիշների կատարելագործութեան։ Փիլիսոփայութեան մէջ նա դտել էր այն ճշմարիտ բալասանը հոգու, որի մասին խօսում է Ցիցերոնը։ Նրա մշտական զարհուրելիներն էին. չիբուխը, այցելուների ընդունելութիւնը, իր տան տիրոջ ու նրա կնոջ հետ արած զրուցատրութիւնը և սարդերի կուի դիտելը։ Այս վերջին տեսարանը այնքան ծիծաղ էր պատճառում նրան, որ նրա աչքերը լցւում էին արտասուքով։

Սակայն թոքախտը, որից նա տանջւում էր դեռ քսան տարեկան հասակում, 1677 թուականի սկզբին, ստացել էր զարհուրելի կերպարանք, և Սպինոզային հասցրել էր մահւան անդունդի եղերքը։ Փետրուարի 22-ին, կիրակի օրը նա թախանձագին կերպով խնդրում էր իր բարի տանտիրոջը, և նրա բարի կնոջը՝ որ թողնեն նրան մենակ և գնան իրանք եկեղեցի, որովհետև նա չէր ուզում մտածել անգամ, որ իր հիւանդութեան պատճառով, նրանք կարող են չկատարել իրանց կրօնական պարտականութիւնները։ Նրանք վիշտ հիւանդի թախանձանքին։ Երբ նրանք վերադարձան եկեղեցուց, նա սկսեց խօսել նրանց հետ այդ օրւայ քարոզի մասին և ախորժակով կերաւ մի կտոր հաց։ Ճաշից յետոյ նրա բարեկամները դարձեալ գնացին եկեղեցի, թողնելով բժշկին հիւանդի մօտ։ Վերադառնալով տուն, նրանք, ցաւօք սրտի, իմացան որ նա վախճանել է ժամը երեքին, բժշկի ներկայութեամբ, որ տանելով իր հետ սեղանի վրայ եղած քօղը և արծաթապատ դանակը, թողել է մեռածի դիակը անտէր, անտիրական։ Այդպէս վախճանւեց 45 տարեկան հասակում՝ իր խելքի զարգացման և հասունութեան գագաթնակէտի վրայ՝ հանճարեղ իմաստասէր Բենեդիկտ Սպինոզան։

Եւ այսպէս, ընթերցող, դուք ծանօթացաք այս մեծ մարդու կեանքի ընդհանուր գծերի հետ, դուք հետամուտ եղաք նրա բնաւորութեան գլխաւոր յատկանիշներին և մենք համոզւած ենք, որ այդ ծանօթութիւնը թէ իրատական և թէ հետաքրքիր է ձեզ համար։ Այժմ դուք աւելի ևս մեծ հետաքրքրութեամբ կըցանկայիք ծանօթանալ նաև Սպինոզայի քարոզած մտքերի, նրա վարդապետութեան հետ։ Եւ մենք, հետևեալ գլխում՝ կաշխատենք բաւականութիւն տալ ձեր այդ հետաքրքրութեանը։

ԵՐ. ՂՈՉՈՐԵԱՆ

(Կըշարունակւի)

գեղարւեսս

Թատրոն, նկարչութիւն

Մեր պատմական պիէսները գաւառներումն էլ սկսել են կորցնել իրանց նշանակութիւնը շնորհիւ անբովանդակ, անկապ շարադրութեան, տեսարանների բացակայութեան և անբեմական լինելուն։ Ճշմարիտ է, դերասանները կարելին չափ փոփոխում են իրանց դերերը, կրճատում մոնոլոգները, սակայն հիմնովին փոփոխել անախրօնիզմներով լի մի պատմական գրւածք, այդ նրանց գործը չէ։ Գործողութիւն չկայ մեր պատմական պիէսների մէջ, այլ նրանց մէջ միայն պատմւում է սրա-նրա հերոսութիւնը, դաւաճանութիւնն ու նենգութիւնը։ Տենդէնցիան իսկ մեր պատմական պիէսներում, խիստ անալիզի ենթարկելով, շատ առաձգական է։

Այժմ հնարաւոր է համարւում Արշակ Բ. ողբերգութիւնը ներկայացնելը, նախ որ կանայք այլեւս չունին, եղածն էլ դերասանները հանել են և երկրորդ՝ բեմական դժւարութիւններ չունի։ Սակայն ինչ պիէս է այդ Արշակ Բ. և ինչ արժանաւորութիւններ ունի նա։

Պարսից Շապուհ Արշակ Բ. հայոց թագաւորին բանտի մէջ շղթայակապ պահում է հայ զօրավարների հետ։ Հայոց քաջ Դրաստամատին, հանգա-

Ագռաւ թշուառ զոհի հետեր.

մանքների շնորհիւ, յաջողւում է Զապուհի կեանքն ազատել և Քուշանաց թագաւորին սպանել։ Այդ պատճառով Զապուհը Դրաստամային առաջարկում է մեծ պատիւներ, հարստութիւն, նոյն իսկ Արշակունեաց գահն ու թագը։ Բայց այդ բոլորից Դրաստամասը հրաժարւում է և Զապուհից խնդրում միայն մի օր ազատ թողնել Արշակ Բ. հայոց թագաւորին։ Մի հարց. ինչու է Դրաստամասը գերադասում Արշակի մի օրւայ ազատութիւնը Արշակունեաց գահը և թագը ընդունելուց։ Անշուշտ նա կամենում է Արշակին տեսնել իր գահի վրայ և հէնց այդ պատճառով նա կանխատեսել է. մի օր Արշակը ազատ լինելով նա կարող է նրան փախցնել Հայաստան և բազմեցնել իր գահին։ Սակայն Քուշանաց թագաւորին յաղթող, Պարսից Զապուհ սրբազին ահեղ պատերազմից ազատող քաջն Դրաստամասը մի նենգ Ալանոզանի առաջ, այն էլ կրիտիկական րոպէում, հէնց այն ժամանակ, երբ նրանք ամեն պատրաստութիւն տեսած՝ Արշակին Հայաստան են կամենում փախցնել, մի խարդախ զօրավարի առաջ ընկճւում են և ինքը քաջն Դրաստամաս և Հայոց թագաւոր Արշակ Բ. և Հայոց քաջարի զօրավետները։ Հայոց թագաւորը, Դրաստամաս քաջամարտիկ զօրավարը, որի նմանը Պարսից հզօր բանակում չըգտնւեց Զապուհի կեանքն ազատելու համար, (նրանց թւում և պարսից Ալանոզանը Դրաստամասի ոյժի առաջ ոչինչ էր) սակայն այժմ այդ վիթխարիները, այն էլ կրկնում ենք, ճակատագրական րոպէում իսկ, շանսատակ չեն անում նենգ Ալանոզանին, այլ անզօր դաւնուկների նման իրանց պարանոցներն ու բազուկները մեկնում են Ալանոզանի առաջ, որը շղթայել է տալիս, բացի Դրաստամասից, որի ձեռքի Զապուհի մատանին ազատում է նրան։ Ուրեմն հայերը քաջ են խօսքով,—ահա այն եզրակացութիւնը, որ հանդիսականը անում է։ Դրաստամասի, հայոց զօրապետների քաջութիւնը պատմւում է բեմի վրայ, հանդիսականը այդ չէ տեսնում, ուրեմն և իրաւունք ունի չըհաւատալ, քանի որ նոյն հանդիսականը իր աչքերով տեսնում է հայերի անզօրութիւնը, թուլութիւնը, փրազիօր լինելը ամենաճանր րոպէներում իսկ։

Մի օրինակ ևս։ Արշակի կին հայոց թագուհի Փառանձեմին սպանել են նոյն պարսիկները, նրա մորթուց խրտիլլակ շինել և բերել Արշակին։ Հինգ տարի է նա իր թագուհուն չի տեսել, նրա դիակն է այժմ առաջին, սակայն ինքը Արշակը չի մոտենում իր թագուհուն, չի լանում իր արտասուքով նրա երեսը, չի առնում իր կարօտը նրանից գէթ մի համբոյրով, այլ հայոց նախարարներին է ասում որ ողբան։ Անբնական տեսարան։

Հասկանալի է, որ այսպիսի պարագաներում թէ թագաւորը և թէ իւրայինք շատ կոմիկական դրութեան մէջ են մնում։

Այսպիսի ներկայացումներին թէ Թիֆլիսում և թէ գաւառներում յաճախում է այն հայը, որ կամենում է տեսնել թէ երբեմն հայն ինչ տեսակ թագաւոր, ինչպիսի զօրասէր և զօրք է ունեցել։ Եւ իր անցեալի պատկերը տեսնել ցանկացող հայը գալիս է տեսնում իր թագաւորի գլխին թղթի թագ, ձեռքին կարդոնի սուր, տանը մեծ-մեծ խօսացող, իսկ թշնամու առաջ անզօր գերի, հլու արարած։

Զուշում պ. Պետրոսեանի խումբը ներկայացրեց և Արշակ Բ. պիէսը։ Թատրոնը կիսով չափ էր լիքը։

Միշտ երբ առիթ է եղել, մենք ասել ենք և այժմս էլ կրկնում ենք, որ հայ թատրոնը ինքը կարօտ է ուրիշների աջակցութեան և բարեգործութեան։ Ներկայ հանգամանքներում յանցանք է հայ թատրոնը ծառայեցնել բարենպատակ գանազան հաստութիւնների։ Մեր գաւառացի երիտասարդութիւնը և ձեռնհաս անձինք փոխանակ տոմսակ ծախելու այն օրերը, երբ բարի նպատակով է լինում ներկայացումը, պարտաւոր են աջակցել դերասանական խմբին առանց ակնկալութեան, փոխարէնը պահանջելով նրանցից լաւ ոյժերից կազմած խումբ և օրինաւոր բէպերտուար։

—

Ներկայ յուլիսի 17-ին լրացաւ հայազգի մեծ նկարիչ Յ. Կ. Այվազովսկու 80-ամեակը։

Ուրիշ անգամի թողնելով նրա մանրամասն կենսագրութիւնը, երբ առիթ կունենանք տպագրել մեծ նկարչի պատկերը Տարազում, առայժմ ասենք որ նրա արդիւնաւոր տաղանդը գնահատած է ոչ միայն Ռուսիայում, այլ նաև ամբողջ Եւրոպայում։ Նրա պատկերները ներկայումս Փլորենցիայում Ռաֆայէլի պատկերների հետ զարդարում են միջազգային նշանաւոր նկարիչների գալերեան։

Ասենք նաև, որ Մոսկւայում տարապարուղ Ելբայրական օգնութիւն Տաճկաստանում վնասւած հայերին ռուսերէն ժողովածւի համար նա պատրաստել է, հետևեալ շքեղ պատկերները. 1 Տաճիկներ հայերով բեռնւում են շոգենաւը. 2. Տաճիկներ հայերին Մարմարեան ծովն են թափում. 3. Նոյը իջնում է Արարատից. 4. Զովանում է։

—

ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի, յուլիսի 22-ին Նորին Կայսրական Մեծութիւն այրիացեալ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի անւանակոչութեան օրը, Սիօնի տաճարում Վրաստանի էկզարխը հանդիսաւոր մաղթանք կատարեց, որին ներկայ էին հոգևորականաց դասը, քաղաքիս բարձր պաշտօնեաները և ժողովուրդ։ Մաղթանքից յետոյ Արսէնալի սարից 21 անգամ թնդանօթ արձակւեցաւ։

Մաղթանքներ կատարւեցին նաև հայոց և ուրիշ դաւանութիւնների եկեղեցիներում և աղօթատներում։

Այդ օրը քաղաքս զարդարւած էր դրօշակներով և երեկոյեան լուսավորութիւն կար։

—

Թիֆլիսի նոր նշանակւած նահանգապետ իսկական պետական խորհրդական Ֆ. Ա. Բիկովը յուլիսի 23-ին իր պաշտօնի մէջ մտաւ, իր նախկին՝ նահանգական դատարանի նախագահի պաշտօնը յանձնել է իր օգնական իսկ. պետ. խորհրդական Ֆ. Ֆ. Ռուրգարդտին։

—

Առաջիկայում Ռուսիա ժամանող երիտ բարձրագոյն հիւրերի համար մեծ պատրաստութիւններ են տեսնւում։ Այսպէս գերմանական կայսր Վիլհէլմի գալուս առիթով Կրօնշտադտի մօտ կըհաւաքւեն իննռուսական և տասնմէկ գերմանական նաւեր։

Իսկ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆելիքս Ֆորին դիմաւորելու կըգնան, ի միջի այլոց և մամուլի ներկայացուցիչները մի քանի շոգենաւերով։

—

Մոսկւայում առաջիկայում տեղի ունենալիք XII միջազգային բժշկական ժողովի համար Եւրոպայի ամենայն կողմերից մեծ թիւով բժիշկներ կըգան։ Միայն Իտալիայից—լրագիրների ասելով—500 հոգի են գալու։

Մոսկւան ներկայումս մեծ շարժողութեան մէջ է և գիտնական հիւրերին ընդունելու պատրաստութիւններ են տեսնուում։

—

Օդեսսայի լրագիրները հաղորդում են, որ այնտեղի պ. Ա. Մանթաշեանի ֆիրմայի ներկայացուցիչ պ. Վերմիշեանը գտել է նաւթից առաջացած հրդեհը հանգցնելը կերպը եռացրած ջրով։ Արաճ փորձերը լաւ հետեւանք են ունեցել։ Պ. Վերմիշեանը իր գիւտի մասին յայտնել է Օդեսսայի ռուսական կայսրական տեխնիքական ընկերութեան։ Մասնագէտներից կազմուած յանձնաժողովը նոյնպէս փորձեր արաւ եռացրած ջրով հանգցնելու հրդեհը և փայլուն արդիւնք ստացաւ։ Մօտիկ ապագայում վերջնական փորձեր կըլինեն այդ միջոցով հրդեհները հանգցնելու մասին։ Փորձերի հետեւանքի մասին տեղեկութիւն կըտրւի տեխնիքական ընկերութեան։

—

Անգլիայում նորից սկսել են Տաճկաստանը բաժանելու ձայներ լսել և ծրագիրներ կազմել այդ նպատակով։ Այդ ծրագիրներից մէկը գետեղած է «Gard. Review» թերթում, որի հեղինակը ցանկանում է որ այդ միտքը—բաժանելու հարցը – բարձրացնէր Վիկտորիա թագուհին։ Նրա կարծիքով Անգլիան պէտք է համաձայնութիւն կայացնի Ռուսիայի հետ. այդպիսով կարելի է Եգիպտոսը և Սոփիան (?) թողնել Անգլիային, իսկ Փոքր-Ասիան Հայաստանի հետ Ռուսիային։

—

Կրկին ձերբակալութիւններ Կ. Պոլսում. Ռուս. հեռ. գործակալութիւնը յուլիսի 19-ից հեռագրում է Կ. Պոլսից. «Կալանաւորուած են շատ հայեր այն պատրւակով, որ հայկական կոմիտէի մի կարեւոր անգամ փորձ էր արել փող կորզել մի հայ բժշկից»։

—

Եւրոպայում և Ռուսիայում կըրկին սկսեցին հեղեղները։ Դունայ գետը լուրտակել է իր ամբարտակը. մի քանի կամուրջներ և երկաթուղու գծեր քանդել են։ Աւստրիայի զանազան կողմերից նոյնպէս լուրեր են գալիս հեղեղումների մասին։ Իշլ քաղաքը նոյնպէս հեղեղուած է, շատ բնակիչներ թողել տները՝ փախել են։

Պրագայից հեռագրում են, որ ամբողջ Բոհէմիայում գետերի ջրերը բարձրացել են և դուրս եկել իրանց ափերից, ահագին վնասներ հասցնելով դաշտերին և քանդելով ճանապարհները։ Եղել են և մարդկային զոհեր։ Սակսոնիան և Սիլէզիան (Գերմանիա) նոյնպէս հեղեղուած են։ Շատ երկաթուղու գծերի վրայ հաղորդակցութիւնը ընդհատուած է. շատ կամուրջներ և տներ կործանուել են. հարիւրաւոր մարդիկ են խեղդուել։ Նիւթական վնասն ահագին է. միայն Սիլէզիայում վնասը հասնում է 12 միլիօնի։

Կերճումն էլ հեղեղումը նորերս ահագին վնասներ է հասցրել. քաղաքի ցածր մասը ողողուել է ջրով. խանութներ, տներ մնացել են ջրի տակ։ Ձրին զոհ են գնացել 150 հոգի, որոնցից միայն 16-ի դիակն է գտնուած։ Քանդուել է կամուրջը, ինչպէս և շատ տներ։ Վնասը շատ մեծ է։

—

Մեր մշտական աշխատակից պ. Եղիշէ Թոփչեան, որի գեղեցիկ գրուածքների հետ ծանօթ են Աղբիւրի և Տարազի ընթերցողները, գնում է Ռուսիա կատարելագործուելու ուսման մէջ։ Ուսման ծախսը յանձն է առել Մեծ-Բրիտանիայի արժ. Վլեոնդ քահ. Տէր-Մկրտչեանը, որի խնամակալութեան տակ գտնուած երկդաստեան-երկսեռ դպրոցում պ. Թոփչեանը վերջին տարիները աւագ-ուսուցչի պաշտօն էր վարում։

—

Պետական խորհուրդը հրամայել է անցաթուղթ վերցնելու համար 15 կոպէկից աւել չըվերցնել, որ նշանակուած կըլինի անցատերի վրայ։ Աւելորդ փող վերցնող պաշտօնեան պատժի կ'ենթարկուի։

—

Թիֆլիս—Կարսեան երկաթուղու գիծը պատրաստ կըլինի առաջիկայ 1898 թուականի վերջերին և այդ ժամանակից կըսկսուի երթևեկութիւնը։

—

Կարսի շրջանում գտնուող Նովոդուբովեան ամառանոցի գիւղացիներին կարկտահարութիւնից և հեղեղումներից վնաս է հասել անցեալ յունիս ամսին, տեղական իշխանութեան որոշմամբ, մօտ 20,000 րուբլի։

—

Մինչև յուլիսի մէկը Պետերբուրգի բանկը պատերազմից վնասուած յոյների օգտին ընդունել է փոխադրել 32,779 րուբլի։

—

Արդէն պետական բանկերում դադրեցրած է մեկ ռուբլիանոց թղթադրամի գործածութիւնը և կըդադարեցնուի նաև երեք րուբլիանոցի գործածութիւնը։

— —

Խառն լուրեր

Դեսպանների բանակցութիւնները շարունակուում են և կարծես վերջ չունին։ Վերջին նիստերից մէկում վճռել է վերահսկողութիւն նշանակել յունական ֆինանսների վրայ։ Դրա նախաձեռնութիւնը պատկանում է Գերմանիային, որի հետ միացել են Աւստրիան, ապա Ռուսիան։ Միւս պետութիւններն էլ հետեւել են դրանց։ Յունաստանը համաձայնուել է և այդ կէտին. հանակցութիւններից յետոյ դեսպանները պէտք է ստորագրեն խաղաղութեան դաշնագիրը և առաջարկեն սուլթանին ի հաստատութիւն։ Երևի այդ պրոցեսսն էլ ամիսներ կըքաշի։ Իսկ մինչև այդ՝ տաճիկ արիւնկզակ զօրքերը Թեսալիայի աւերածութեան պակասը կըլրացնեն։

—Հնդկաստանում տեղացիների ապրուստամբութիւնը սպառնական կերպարանք է ստանում։ Անգլիացիք յաջողութեամբ ճակատում են ապստամբուած ցեղերի դէմ, որը առաջացել է Հնդկաստանի փոխարքայ Համլտոնի ասելով, ֆակիրների ֆանատիկոսութիւնից, որոնք տեղացիներին գրգռում են անգլիացիների դէմ։

Ձիշտ է, անգլիական զէնքը կըճնշէ այդ ապստամբութիւնը, բայց այդ դէպքերը մեծ ազդեցութիւն կունենան և կըթուլացնեն Անգլիայի ազդեցութիւնը միւս քաղաքական հարցերում։

—Փիլիպպեան կղզիներում (Կուբա) ապստամբութիւնն աւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում։ Սպանացիները շատ նեղն են եկել, ոչ մի կերպով չեն կարողանում ճնշել ապստամբութիւնը։ Միայն մի գաւառում սպանւած են 200 սպանացիներ։

—Սերբիայի և Տաճկաստանի յարա-

բերութիւնները լարուած են. արնաուտները սերբիական տիրապետութեան տակ գտնուող սահմաններն են մտնում Կասովի սանջակից և յարձակումներ գործում։ Սերբիայի դեսպանը վերջերս Դրանը մի յայտագիր է ներկայացրել, որի մէջ ասւած է, թէ Սերբիան վճռել է արնաուտների խմբերին հետևել նոյն իսկ օսմանեան երկրում և թէ Պրոկուպլէում մի ամբողջ գունդ զօրք կըպահի, որ անյապաղ դէպի սահմանը կըդիմէ հէնց որ կրկին նոր յարձակումներ կըլինեն։

—Ֆևադ փաշայի Կրէտէ գնալը դիպլոմատիական աշխարհում առանձին խօսակցութիւնների առարկայ է դարձել։ Տաճկաստանը Ֆևադ-փաշային ուղարկելով Կրէտէ, իր ուզածն է կատարում. ասում են, իբրև թէ շուտով նա գինևորական օգնութիւն ևս կըստանայ և սուլթանի իշխանութիւնը կըվերականգնի Կրէտէի վրայ։

Այդ բոլորը կղզու քրիստոնեայ բնակիչներին յուսահատութիւն մէջ է գցել և Եւրոպայի անունը սաստիկ ընկել է նրանց աչքում։

Ֆևադ-փաշան յայտնել է Նովակալներին, թէ ինքը իբրև գինևորական նահանգապետ չէ եկել Կրէտէ, այլ սուլթանի առանձին յանձնարարութեամբ։ Նովակալները պատասխանել են, թէ քանի որ իրանք Կրէտէումն են, այդ բանը աւելորդ է. Ֆևադը պատասխանել է, թէ կըդիմէ սուլթանին նոր կարգադրութեան համար։ Ապստամբութեան պարագլուխները մերժեցին ընդունել Ֆևադի առաջարկութիւնը բանակցելու իրանց հետ։

———

Նամակ խմբագրութեան

Մոսկուա, 6 յուլիս.

Զգալով մեր ադհասիկ գրականութեան կրիտիկական ճիւղի ոչնչութիւնը՝ մենք վստահանում ենք, այդ գործին ծառայելու նպատակով, հրատարակել «Նոր Փորձ» անունով գրականական մի ժողովածու (տարին երկու գիրք), որի մեծ մասը կազմած կըլինի կրիտիկական յօդուածներից։ Մենք կըդնենք մեր բոլոր ջանիերը հետաքրքիր անելու յօդուածներն, օրայ «այրող» հարցերի մասին խօսելով, նոյնպես և կաշխատենք, որ այդ յօդուածները լինին նախապատրաստած։

Սակայն մենք, միևնոյն ժամանակ, անտես չենք առնիլ, իհարկե, գրականութեան և միւս ճիւղերը։ Մեր ժողովածուի մէջ մենք տեղ կըտանք և բելետրիստիկային և գիտական պոպուլար աշխատութիւններին։ Այդ ամենը, կարծում ենք, կընպաստեն հայ ընթերցողի զարգացմանը, սրա նոգեկան և մտաւոր ընդունակութիւնների աճել-մեծանալուն։

Մենք ուրախութեամբ կընդունենք նոյնպես և բարգմանութիւններ։ Մենք ունինք մի շարք գեղեցիկ յօդուածներ և գրւածքներ, որոնց բարգմանելն աւելի հաճ ցանկալի է։ Թարգմանել ցանկացողները կրբաւեիանեն դիմել Նոր Փորձի խմբագրին և նա ուրախութեամբ կըյայտնի այդ յօդուածների և գրւածքների ցուցակը։ Նամանաւանդ մենք դարձնում ենք մեր բարգմանիչների ուշադրութիւնը եւրոպական գրականութեան կրիտիկոսների վրայ,—դրանց գրւածքներից մի երկուսը թէ որ բարգմանւած են,—լաւ է։ Միևչդեռ այդ գրւածքների անհագին օգուտը ո՞վ մեզնից չի ճանաչում։

Մենք չենք կարող ուրանալ այն օգուտը, որ հայ ընթերցողն է ստանում արդեն գոյութիւն ունեցող մեր պարբերական բերթերից և ամսագիր-ժողովածուներից։ Բայց և միեւնոյն ժամանակ ուզում ենք հաւատալ, որ մեր ժողովածուն էլ—քող նեղ ինչ—բայց օգուտ կըբերի մի իջակ հայ ընթերցողին։ Իսկ մեր ժողովածուն գլխաւորապէս նենց «միջակ» ընթերցողի համար է։

Ժողովածւի առաջին գիրքը բաղկացած է մօտաւորապես 130 մեծադիր էջերից (8 տպագրական թերթ) և հրատարակելու է պ. բժիշկ Սիմեօն Զահնազարեանցի ծախքով։ Գինը՝ բաժանորդ գրւողների համար՝ 50 (յիսուն) կոպեկ է (վճարել կարելի է մարկայով)։

Առաջին գրքի բովանդակութիւնը։

1) *Առաջաբանի փոխարէն։*—2) Ա. Ադելեան. „Ձար չըկայ“. (վէպիկ).—3 Յովհ. Զահնազարեան. „*Մեմեղ գոհեր*“ (*կանայք Գ. Զուբարի գրւածքներում*).—4) Ա. Լազարեան. „*Ձեռագիր*“ (*վէպիկ- ժակ Նորմանից*):—5) Յովհ. Գնունի. „*Ինչ է կեանքն Ուղղիմը իր ազգին*“ (*ինքնական տեսութիւն*):—6) Ա. Ն. „*Թրատուրութիւն*“ (*առակ—ժիւլէ Մէտրից*),—7) Արտաշէս. „*Մարդ թէ՞ անասուն*“ (*Մարսել Պրևոյի* „Lettres de femmes“-ը):—8) օր. Կաւարինէ Ներսէսեան. „*Խղճագէր*“ (*վէպիկ Մարսել Պրևո'ից*):—9) Ստ. Գրիգորեան. „*Մի ուղղութիւն կրիտիկայի մէջ (Ի. Իվանովից)*:—*Մելիք. Տարգևևվի* „*Առձակ բանաստեղծութիւնները*“ *պ. Ս. Տատուրեանի թարգմանութեամբ (գրախօսութիւն)*:—“ Ս. Մինասեանց. „*Կապանմներ*“ (*Գոմէկիա Պոլ Էրվիե'ի*):—12) *Խմբագրութեան կողմից։*

Ընդունեցէք եւ այլն
„ՆՈՐ-ՓՈՐՁ“Ի *խմբագրող*
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

P. S. Առաջին գիրքը լոյս կըտեսնի մօտաւորապէս սոյն տարւայ սեպտեմբեր ամսին։

Նամակ Պարսկաստանից

Լնգելէ, 8 յուլիսի.

Պարսիկների անտեղի կատաղութիւնը (Պարսկաստան բերւած դինամիտի պատճառով) ոչ մի հետևանք չի ունեցել մինչև այժմ։ Թեշէդ նստող կրօնապետը մոլլաների ժողովրդի ուղղած հեռագրին հետևեալ կերպով է պատասխանել... Զըլինի խռովութիւնների պատճառ գառնաք, սխալ քայլեր անէք. թողէք խաւիջաները (օտարադաւան) շարունակեն իրանց գործը Պարսկաստանում. ձեզ յայտնի է, որ մեր Սրբազան հողը երկնքի և իմամների իշխանութեան տակ է դարերից ի վեր. նա պահպանել է իր գոյութիւնը և ազատ է մնացել քրիստոնեայ տէրութիւնների բռնապետութիւնից և դարձեալ կըմնայ։ Յուսով եղէք, այդ աստիճան ոտնձգութիւն չեն կարողանալ Պարսկաստանում, հակառակ դէպքում ես գիտեմ իմ անելիքը։ Սպասեցէք գործի վախճանին։

Կրօնապետի այդ խորհրդաւոր հեռագիրը թէպէտ գոհացում է տւել ոգէտ ժողովրդի պահանջներին գէթ առ ժամանակ թողնել իրանց չար մտագրութիւնները. սակայն Ինզելի-Ղազիանում երեկոներին պայթող դինամիտի գդրդիւնը կրկին ալեկոծում և վերջին յուսահատութեան է հասցնում յուզած պարսիկներին։

Երէկ խորասանից եկած զբօսաւորւած մի դերւիշ հրապարակաւ քարոզում էր և միամիտներին դրգռում քրիստոնեաների դէմ. նրան շրջապատել էր անթիւ բազմութիւն։ Փիլանի ընդհանուր նահանգապետ (Ռաշտի գատաւոր)՝ և նշանակւած ներկայ Զահի որդի Ֆսամբլ-Սալթանէն, որի ազդեցութիւնը ներկայից սաբսալի է տարածել, քաղաքումս գաւառներում մի քանի գողերին, չանցաւորներին անտանելի պատժի ենթարկելու համար։ Լսում ենք որ այդ նոր երիտասարդ դատաւորը (լուսնի վերջին) այսքանի օրերս Ինզելի պիտի գայ այցելութեան։

ԳՆՈՒՆԻ

———

Ասորիզմներ

Բախտաւոր է նա, ով ցանում է ճշմարտութեան եւ բարութեան սերմեր.—հունձը նրա յոյսերն ի դերեւ չի հանիլ։

Լակորդեր

Եղիր ինքդ բարոյապէս ուժեղ, եթէ կամենում ես մարդկանց ճշմարտութիւն ուսուցանել. ապրիր ճշմարտութեան մէջ, եւ կեանքդ կըլինի վսեմ եւ ազնիւ ուսման առարկայ։

Բ. Լիւտոն

Չասարակութիւնը օգնել չէ կարող նրան, ով սիրում է առանձնութիւն։

Շեքսպիր

———

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

Дозв. ценз. Тифлисъ, 26 іюля 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. уд., № 1—2.